Թատերական խմբակի

2023-2024 ուստարվա ծրագիր

/5-8-րդ դասարանների/

Խմբակի ղեկավար՝ Անահիտ Գասպարյան

Խ. Աբովյանի անվան №4 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն

Ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի բովանդակությանը հատկացվող ընդհանուր ժամաքանակը

Ծրագրի ննպատակը

Խնդիրներ և վերջնարդյունք

Ներածություն

Արվեստը մարդու ստեղծագործական գործունեության ձևերից մեկն է: Այն օգնում է մարդուն հասկանալ աշխարհը , ճանաչել մեծագույն արժեքները , տարբերել և առանձնացնել ազգայինը, զգալ գեղեցիկը, պայքարել բարու և հավերժականի համար:

Արվեստի տեսակներից է թատրոնը, կինոն, ասմունքը:

Թատրոնը օգնում է ճանաչել մարդկային մտքի ճառագումը , ազգային , համաշխարհային գրականության ճանաչմանը, մարդու դասական և ժամանակակից ճաշակի ձևավորմանը, բարձրարվեստ գործերի գնահատմանը և որ ամենակարևորն է բեմական խոսքի , ժեստերի դիմախաղի օգտագործմանը:

Թատրոնը հանդիսանում է մարդու և դարերի միջև անմիջական և տեսանելի կապող միջոցը, բարձրարվեստ բեմարվեստի ժառանգության ճանաչմանը:

- Այս ծրագիրը կազմվել է նպաստելու ու սովորողների զգայական, լսողական , գիտակցական , իրար հետ շփման ընկալման ձևավորմանը:
- Արվեստի գործիքների , արտիստների միջոցով անցել ինքնաճանաչմանը, ինքնահաստատմանը և մտահորիզոնի ընդլայնմանը:
- Սովորողների գեղարվեստական կրթությանը, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը:
- Հոգևոր, ազգային-հայրենասիրական, մարդասիրական զգացումների արմատավորմանը:

Ծրագրի նպատակը և խնդիրները

Դասի ընթացքում կիրառվում են

- Զրույցներ
- Ունկնդրում և վերլուծություն
- Ֆիլմերի դիտումներ
- Ներկայացումների դիտումներ
- Ասմունքի ձայնագրություններ
- Հանճարեղ և նշանավոր դերասանների նկարներ և կյանքի պատմություններ
- Երգեցողություն
- Պար
- Մնջախաղ

Ծրագրի բովանդակությանը հատկացվող ընդհանուր ժամաքանակը

72-76 ժամ

1-ին կիսամյակ

Ամսաթիվ	Թեմաներ	Նյութեր
Սեպտեմբեր	Ի՞նչ է թատրոնը Թատերախումբ	Թատրոնի պատմություն
Հոկտեմբեր	Ազգային թատրոն Թատրոնի տեսակներ	Հայ թատրոն, բեմի անվանի դերասաններ
Նոյեմբեր	Համաշխարհային թատրոն, կինո	Համաշխարհային թատրոնի և կինոյի պատմություն Անվանի դերասաններ
Դեկտեմբեր	Պատանի հանդիսատեսի թատրոն	Ֆիլմերի և ներկայացումների դիտումներ

2-րդ կիսամյակ

Ամսաթիվ	Թեմաներ	Նյութեր
Հունվար	Հայկական առասպելներ	
Փետրվար	Ժողովրդական հեքիաթներ	
Մարտ	Ժողովրդական տոներ, ծեսեր, երգ ու պար	

Ապրիլ	Հայրենասիրական թեմաներ, հիշատակի օրեր	Հայրենասիրական գործերը
Մայիս	Հաղթանակի տոնը Հայրենասիրական պիեսներ	Գրական ստեղծագործությունների ընթերցում
Մայիս	Հաշվետու ներկայացում	

Ընտրովի թեմաներ՝

1. Հ. Թումանյանի հեքիաթներ, պոեմներ
2. Ղ. Աղայանի հեքիաթներ
3. Առասպելներ

Խմբակին տրամադրվել է 2 ժամ

Օրեր	Ժամ	Դասաժամ
Երկուշաբթի	14:05	7-րդ
Հինգշաբթի	14:05	7-րդ

Աշխատանքային օրագիր

1. Հայկական ժողովրդական հեքիաթներ
2. Հայ դասական պոեմներ, պիեսներ
3. Առասպելներ հայկական
4. Դաս-միջոցառումներ
5. Ցերեկույթներ
6. Հիշատակի օրեր
7. Հոբելյանական օրեր
8. Ժողովրդական տոներ
9. Հաշվետու համերգ

Ծրագրի նպատակը

1. Սովորողներին ծանոթացնել խմբակի պահանջներին՝ խմբակային ներկայացմանը մոնոլոգ, դիալոգ և տիկնիկային ներկայացմանը:
2. Վաղ հասակից աշակերտներին հաղորդակից դարձնել գեղեցիկին, բարուն արժեքավորին:
3. Լուրջ աշխատանք տանել աշակերտների խոսքի կուլտուրայի մշակման ուղղությամբ, բանավոր խոսքի զարգացմանը, օգտագործելով հայ և համաշխարհային դասական գործերը պոեզիա, արձակ ստեղծագործությունները:
4. Կատարել դիմախաղի վարժություններ- ուրախություն, ցավ, տխրություն, հաղթանակ, զայրույթ, սեր, հիացմունք, անտարբերություն արտահայտող ժեստերով:
5. Դաստիարակել թիմում խմբային խաղով սեր, համերաշխություն, կոլեկտիվիզմ, միասնություն:
6. Բեմական խոսքով ազդել աշակերտների նյարդային համակարգի ձևավորման վրա, որպես հոգեթերապիա:
7. Աշակերտներին հաղորդակից դարձնել արվեստների բազմազանությունը, հանճարների գործերին և դրանց միջոցով համամարդկային , ազգային բարոյական արժեքների:
8. Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ անվանի դերասանների հետ, կազմակերպել կինոդիտումներ, այցելել թատրոններ, դիտել ներկայացումներ:
9. Պարբերաբար հանդես գալ փոքրիկ ներկայացումներով դպրոցական միջոցառումներին, պետական տոնական օրերին, հոբելյանական իրադարձություններին համակցելով ասմունքի , երգի, պարի խմբակների հետ:
10. Պատրաստել տարեվերջյան հաշվետու համերգ՝ ներգրավվելով ողջ թատերական խումբ:

Խնդիրներ

- Ծրագիրը կազմել՝ հաշվի առնելով երեխաների ակտիվ, բեմական տվյալները, բեմական տվյալները, բեմական խոսքը, երաժշտական և պարային ունակությունները:
- Օգտագործել ամեն տեսակի հնարներ լսողության, հիշողության և համապատասխան ձայնավարժությունների ընտրության գործում

Վերջնարդյունք

- Ծրագրի յուրացում, խմբավարի պահանջներին, խոսքի ըմբռնում, լիովին ընկալում:
  Երեխաների բեմական կեցվածքի, ազատ, անկաշկանդ խաղի իրականացում բարձր բեմական տրամադրության տիրույթում, հանդիսատեսին բերկրանք պարգևելու մեծ կուլտուրայի ապահովում
- Քո բոլոր նպատակները, տրամադրությունները հանդիսատեսին հաղորդելը:
- Հետաքրքրություն հանդես բերել տարբեր դերերի և դերասանների կատարումների վերաբերյալ:
    - Կարողանալ վերլուծել և հայտնել սեփական կարծիք: